ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերանորոգման աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.08.2017թ. ժամը 09:30-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարախանյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Խաչատրյան /գնահատող/

Մ. Աղայանց /գնահատող/

Ա. Դանիելյան /բացող/

Մ. Պողոսյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

Հայտերի բացման և գնահատման մասին

1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Հասցեները	Էլ. հասցեները
1	<<Կամպարե>> ՍՊԸ	ք.Ար. Խաչատրյան 19, բն. 32	kampare@mail.ru
2	<<Վահրադյան Շին>> ՍՊԸ	ք. Ստեփանավան, Չարենցի 175	vahradyanshin@yandex.ru
3	<<Ռազշին>> ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, գ. Գավառ, Գ. Միքայելյան 69	razshin@mail.ru
4	<<ԱՐԹՄԱՇԻՆ>> ՍՊԸ	Հանրապետության 1-ին նրբ. տ 8/Ա	

2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 <<Կամպարե>> ՍՊԸ-ի, <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ի և <<Ռազշին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.2 <<ԱՐԹՄԱՇԻՆ>> ՍՊԸ-ի ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթեր՝ բացակայում են հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը /հավելվածները/, ներառյալ գնային առաջարկը:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1<<Կամպարե>> ՍՊԸ-ի և <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 <<Ռազշին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 4 գնային առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ գնային առաջարկով ներկայացված տառերով գրված թվերի թվաբանական գումարը չի համապատասխանում տառերով գրված ընդհանուր թվին:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Առաջարկված գները, ՀՀ դրամ		Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Չափաբաժին
		առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ		
1	<<Կամպարե>> ՍՊԸ	4774249	4774249	8196160	1
2	<<Վահրադյան Շին>> ՍՊԸ	5800000	6960000		
3	<<Ռազշին>> ՍՊԸ	5790000	6048000		
4	<<ԱՐԹՄԱՇԻՆ>> ՍՊԸ	-	-		

6. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը.

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ <<Կամպարե>> ՍՊԸ-ին;

Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ին;

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.2 և 4.2 կետերը՝ մերժել <<ԱՐԹՄԱՇԻՆ>> ՍՊԸ և <<Ռազշին>> ՍՊԸ-ի հայտերը՝ հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

7,1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 6-րդ մասով ընդունված որոշումը՝ շարունակել հայտերի գնահատման գործընթացը ARMEPS համակարգով՝ էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:
7,2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցից հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո՝ հաջորդ աշխատանքային օրը ժամը 10:30-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 308 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Մ. Կարախանյան /նախագահ/

Մ. Աղայանց

Ա. Խաչատրյան

Ա. Դանիելյան

Մ. Պողոսյան

Ա. Մարգարյան /քարտուղար/